# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*1. Անունը, ազգանունը*

Սարգիս Հայոցյան

*2. Զբաղեցրած պաշտոնը*

ՀՀ գիտության կոմիտեի նախագահ

*3. Գործուղման վայրը և ժամկետները*

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, ք. Կարլսռուե, 1-3 մարտի, 2023 թվական

*4. Հրավիրող կողմը*

Եվրոպական հանձնաժողովի Միացյալ հետազոտական կենտրոն

*5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)*

Մասնակցություն Եվրոպական հանձնաժողովի Միացյալ հետազոտական կենտրոնի կառավարիչների խորհրդի 129-րդ նիստին

*6. Քննարկված թեմաները*

- Գլխավոր տնօրենության զեկույցը ՄՀԿ 2022 թվականի գործունեության վերաբերյալ,
- ՄՀԿ 2022 թվականի բյուջեի կատարողականը,
- ՄՀԿ որոշ անդամ պետությունների հետազոտությունների և նորարարությունների ոլորտների ռազմավարությունը:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Քննարկվել են ՄՀԿ բաց ենթակառուցվածքների և ՀՀ գիտական կառույցների միջև համագործակցության, ինչպես նաև ՄՀԿ ընձեռած հնարավորությունների շրջանակում ՀՀ գիտնականների վերապատրաստման համար առավել արդյունավետ մեխանիզմների ներդրման հարցերը:

Ս. Հայոցյանը ներկայացրել է ՀՀ գիտության կոմիտեի կողմից իրականացվող ՀՀ գիտական համայնքի՝ Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրմանն

ուղղված ծրագրերը:

Ս. Հայոցյանը հանդիպել է նաև Իսպանիայի Թագավորության ազգային հետազոտական խորհրդի միջազգային հարաբերությունների գծով փոխնախագահ Ֆրանսիսկո Հավիեր Մորենո Ֆուենտեսի հետ՝ քննարկելու գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում երկկողմ համագործակցության հաստատմանն առնչվող հարցեր:

*8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը*

Իսպանացի գործընկերոջ հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում կազմակերպել տեսազանգ՝ համագործակցության մեկնարկի համար:

*9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.*

Եվրոպական հանձնաժողովի Միացյալ հետազոտական կենտրոնի կառավարիչների խորհրդի 129-րդ նիստին կայացվել է օրակարգային հարցերի ընդունման վերաբերյալ որոշում, ինչպես նաև լսվել է մասնակից 3 պետությունների՝ Ֆինլանդիայի, Նիդերլանդների և Սլովենիայի հետազոտությունների և նորարարությունների ոլորտների ռազմավարական և քաղաքականության ուղղությունների մասին զեկույցը՝ «Գիտությունը հանուն քաղաքականության» խորագրով:

*10. Ստորագրություն, ամսաթիվը*

Recoverable Signature

X 

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Signed by: HAYOTSYAN SARGIS 3611840777

Սարգիս Հայոցյան

07.03.2023թ.